

Ամփոփագիր N°3 Թարգմանիչների ծառայությունները մոնիտորինգի ընթացքում

Սկսած իր հիմնադրման օրվանից՝ 1977 – ից, Խոշտանգումների կանխարգելման միությունը (այսուհետ՝ ԽԿՄ) մշակել է կալանավայրերում կանոնավոր և ինքնուրույն վերահսկում՝ որպես արդյունավետ միջոց կանխելու խոշտանգումները և այլ տեսակի վատ վերաբերմունք կալանավայրերում: Կալանավայրերի մոտիտորինգի նոր ամփոփագրի շարքը հասանելի է դարձնում մեր և մեր գործընկերների ուսումնասիրությունները և գործնական կիրառման լավագույն օրինակները այժմ հասանելի են ազգային և միջազգային մակարդակում գործող մասնագետներին: Այն նպատակ ունի լրացնելու և ապահովելու ԽԿՄ-ի՝ Բանտերի մոնիտորինգ. «գործնական ուղեցույց» հրապարակման մեջ ներառված ասպեկտների առավել մանրամասն ուսումնասիրություն:

Մեկնաբանությունները կամ առաջարկությունները սույն ամփոփագրի շուրջ ողջունելի են և պետք է ուղարկվեն հերևյալ հասցեով՝ apt@apt.ch:

Մայիս, 2009

1. Ներածություն

1.1 Ինչպես կիրառել սույն ամփոփագիրը

Սույն ամփոփագիրը նախատեսված է այն կազմակերպությունների համար, որոնք իրականացնում են կալանավայրերի մոնիտորինգ պետական կամ միջազգային մակարդակով, և որոնց դիտորդներին անհրաժեշտ է զրուցել իշխանությունների կամ այն ազատագրված անձանց հետ, ովքեր չեն խոսում իրենց լեզվով: Վերջինս ուրվագծում է քաղաքականության այն հիմնախնդիրները, որոնք կարող են կիրառել թարգմանչի կարիք ունեցող մոնիտորինգ իրականացնող կազմակերպությունները: Ապա այն նկարագրում է դիտորդի և թարգմանչի համապատասխան դերերը և յուրաքանչյուրի պարտականությունները: Վերջնական աղյուսակում ներկայացված է ուղեցույց՝ նախատեսված դիտորդի և թարգմանչի համար՝ հաշվի առնելով միջազգային և պետական լավագույն փորձը:

1.2 Նախնական պարտավորություններ

Կալանավայրերի դիտորդները հաճախ աշխատում են այնպիսի համատեքստում, որտեղ իրենք չեն տիրապետում ազատագրված անձանց կամ համապատասխան իշխանությունների լեզվին: Հետևաբար, պահանջվում է թարգմանիչների օգնություն՝ պրոֆեսիոնալ, ոչ պրոֆեսիոնալ և տեղում ընտրված¹: Իսկ միջլեզվային, միջմշակութային և անուղղակի հաղորդակցությունը հետագայում ավելի են բարդացնում մոնիտորինգի առաջադրանքը:

Թարգմանչի հետ աշխատելը կալանավայրերի դիտորդներից պահանջում է մի շարք բնատուր և ձեռք բերված հմտություններ: Թարգմանչությունն ինքնին, իհարկե, բարձր պատասխանատվություն ենթադրող գործունեություն է: Լիովին նպատակին հասնելու համար թարգմանչին անհրաժեշտ է համադրել բոլորովին տարբեր գործառույթներ: Շփումը կարող է չկայանալ դիտորդի, թարգմանչի կամ երկուսի պատրաստվածության կամ վերապատրաստման պակասի պատճառով: Նման խնդիրները կարող են բացասական ազդեցություն ունենալ ոչ միայն հարցազրույցի, այլ նաև մոնիտորինգն իրականացնող կազմակերպության վարկանշի վրա:

Մինչև այժմ չկա հատուկ նախագիծ թարգմանիչների ծառայություններից օգտվող մոնիտորինգ իրականացնող կազմակերպությունների համար, որը կօգնի նրանց հաղթահարել ծագած խնդիրները: Վերջիններս պետք է հաղթահարել պրագմատիկորեն՝ ուղղորդվելով համապատասխան պատրաստվածությամբ և քաղաքականությամբ, էթիկական սկզբունքներով և լավ մտածված մեթոդաբանությամբ:

2. Քաղաքականության հիմնախնդիրները

Կալանավայրերում մոնիտորինգ իրականացնող կազմակերպություններին կարող են պարբերաբար և կանխատեսելիորեն թարգմանչի ծառայություններ

¹ Սույն համառոտագրում «թարգմանիչ» տերմինը վերաբերում է և պրոֆեսիոնալ, և ոչ-պրոֆեսիոնալ թարգմանիչներին, ինչպես նաև պատահական ընտրված թարգմանիչներին, ովքեր կաշխատեն դիտորդական այցի ընթացքում:

պահանջվեն: Հնարավոր է, որ նման անհրաժեշտության կարիք ոչ հաճախ լինի: Երկու հավանականություններն էլ պետք է շատ լավ ծրագրավորված լինեն: Ցանկացած պարագայում նրանք կարող են ընտրել մշտական թարգմանիչներ, ժամանակավոր թարգմանիչներ կամ, եթե այլ տարբերակ չկա, անձանց, ովքեր ներկա են և կարող են թարգմանել: Ցանկացած պարագայում նրանք պետք է հատուկ քաղաքականություն մշակեն թարգմանչի համար՝ փորձի, որակի համապատասխանեցման և բարդություններից խուսափելու համար:

2.1 Աշխատանքի տեղավորում և նախնական ընտրություն

Պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ

Նախ, անկասկած, անհրաժեշտ է որոշել արդյոք կազմակերպության աշխատանքը պահանջում է և կարող է իրեն թույլ տալ պրոֆեսիոնալ թարգմանիչներ: Եթե ոչ, ապա կազմակերպությունը պետք է քննարկի ոչ պրոֆեսիոնալների պատրաստման և ընդգրկման խնդիրը: Ցանկացած պարագայում նախընտրելի է ունենալ պաշտոնական և կայուն պայմանագրային պայմավորվածություն, որով կհաստատվեն պայմանագրի տևողությունը, ժամկետները, աշխատավարձը և վճարման տարբերակները, ինչպես նաև ծառայության պայմանները: Յուրաքանչյուր թարգմանիչ պետք է ունենա իր անձնական գործը:

Վճարում և ծախսեր

Եթե անհրաժեշտ են պրոֆեսիոնալներ, ապա արդյոք կազմակերպությունը կարող է իրեն թույլ տալ նրանց ծառայությունները: Եթե նույնիսկ կան կամավորներ, ինչ ծախսեր կարող է կազմակերպությունն ունենալ՝ տրանսպորտային, սնունդ: Կա արդյոք կամավորի համար այլընտրանքային շահ, ինչպիսին է օրինակ պրոֆեսիոնալ վերապատրաստման հնարավորությունը:

Միջազգային և պետական

Միջազգային կազմակերպությունները հաճախ տարբերակ ունենան վարձելու թարգմանիչներ, ովքեր տիրապետում են պետական լեզվին, բայց չեն բնակվում թիրախ երկրում: Վերջինս ավելի ապահով է, քան այն դեպքերը, երբ հետագայում թարգմանիչը չի հեռանում երկրից: Սակայն դա նշանակում է նաև, որ թարգմանիչը կարող է ամբողջովին կտրված լինել ազգային իրականությունից և չկարողանա փոխանցել մշակութային պատկերը: Առկա են նաև որոշակի այլ ծախսեր:

Տեղաբնակ կամ ոչ տեղաբնակ

Անվտանգության նկատառումներից ելնելով՝ խորհուրդ է տրվում չօգտվել տեղաբնակ (երկրի՝ մոնիտորինգի անցկացման հատվածում ապրող բնակչի) թարգմանչի ծառայությունից, քանի որ այն կարող է նրանց համար ռիսկային լինել: “Տեղաբնակ” թարգմանիչները կարող են պակաս անկախ լինել: Ավելին, տեղաբնակ թարգմանիչների ծառայություններից օգտվելը ավելացնում է գաղտնիության բացահայտումը: Մյուս կողմից գրույցի մասնակիցներից ոմանք նախընտրում են խոսել իրենց ծանոթ անձնավորության հետ, ում հետ նրանք կարող են շփվել: Այս

տեսանկյունից տեղաբնակ թարգմանիչների ծառայություններից օգտվելը առավելություն է տալիս վստահության ձեռքբերման և մշակութային ինտեֆեյսի առումով:

Ազգային պատկանելություն, սեռ, տարիք և հմտություններ:

Կազմակերպությունները պետք է ճկունորեն կարողանան աշխատել տարբեր տարիքի, սեռի, մշակույթի, ազգության, ունակությունների և լեզվական հմտությունների թարգմանիչների հետ, որպեսզի կարողանան հարմարվել հարցվողների պահանջներին և անհատականությանը:

Ընտրություն

Չափազանց կարևոր է աշխատել այնպիսի թարգմանիչների հետ, ովքեր կարող են հաղթահարել ոչ միայն լեզվական պատնեշը, այլ նաև հետևել մասնագիտական չափորոշիչներին և էթիկական փորձին: Կարևոր է նաև, որպեսզի նրանք լինեն ըմբռնող: Դժբախտաբար, հայտնի է, որ թարգմանիչները կարող են իրենց շրջապատում օգտվել որպես թարգմանիչ իրենց դիրքից: Մոնիտորինգն իրականացնող կազմակերպությունը պետք է ընտրի հավանական թարգմանչին մանրամասն հարցազրույցի, իրավիճակային ուսումնասիրությունների, երաշխավորագրերի միջոցով՝ ինչպես հարկն է դիմելով ՄԱԿ-ի համապատասխան գործակալություններին, ՀԿ-ներին, թեկնածուի համայնքին կամ պետական իշխանություններին:

Պատահական թարգմանիչներ

Կալանավայրերի դիտորդները հնարավոր է ցանկություն ունենան առանց թարգմանչի ներկայության գրուցելու այնպիսի անձնավորության հետ, ով չի տիրապետում իրենց լեզվին: Այս դեպքում դիտորդը պետք է գնահատի արդյոք իրենց շփումը հնարավոր է: Վերջինս կարող է հնարավոր լինել ամբողջական նախադասություններով պատասխաններ պահանջող հարցադրումների միջոցով, սակայն ոչ այնպիսիների, որոնց լեզուն չտիրապետողը կարող է մեքենաբար պատասխանել՝ ստեղծելով սխալ տպավորություն: Եթե ակնհայտ է, որ պատշաճ շփումն անհնար է, դիտորդը պարտավոր է ապահովել թարգմանչի ներկայությունը: Եթե դա հնարավոր չէ, ապա նա կարող է վերադառնալ ավելի ուշ՝ արդեն թարգմանչի հետ միասին: Սակայն վերջինս կարող է անհնար լինել և, ինչն ավելի կարևոր է, միևնույն ժամանակ ռիսկի ենթարկել անձին: Նրանք նույնիսկ կարող են տեղափոխվել այլ վայրեր:

Այս համատեքստում դիտորդները կարող են դիմել տվյալ պահին ներկա անձանց, ովքեր կարող են գործել որպես թարգմանիչներ: Այս տարբերակից խորհուրդ է տրվում օգտվել ծայրահեղ դեպքում, քանի որ հավանական է, որ տվյալ մարդիկ կարող են չունենալ անթերի հմտություններ: Նրանք հնարավոր է չգիտակցեն գաղտնիության պահպանման ողջ կարևորությունը կամ նույնիսկ հետապնդեն ծածուկ շահեր և ունենան այլ դրդապատճառներ: Արդյունքում նույնիսկ բարի նպատակներից ելնելով՝ ընտանիքի անդամները կամ ընկերները կարող են խոչընդոտել շփմանը՝ ներքաշելով իրենց անձնական կարծիքն ու

տեղեկությունները: Կամ, միգրացե, հարցողն իր ընտանիքի անդամների կամ այլ անձանց ներկայությամբ չցանկանա քննարկել որոշ խնդիրներ:

Այս պարագայում, հավանաբար, լավագույն տարբերակը օգտվել այն անձի ծառայություններից, ում կառաջարկի կալանավորը: Եթե նման անձնավորություն չկա, բայց կան կամավորներ, ապա դիտորդը պետք ուշադիր հետևի հարցվողի արձագանքին և ուշադիր իրականացնի խնդրի առարկան: Հարցվողը կարող է որոշակի պատճառներից ելնելով չարտահայտի իր դժկամությունը տվյալ անձի ծառայություններից օգտվելու վերաբերյալ:

Ցանկացած թարգմանչի ընտրության դեպքում դիտորդը պարտավոր է իր համար պարզաբանելու, թե ով է հավանական թարգմանիչը, ինչ հարաբերությունների մեջ է նա հարցվողի հետ և բացատրել, թե որն է նրանց նպատակային դերը: Եթե դիտորդը կասկածներ ունի պատահական թարգմանչի վերաբերյալ, ապա ցանկալի է գտնել մեկ այլ անձի կամ հետաձգել հարցազրույցը մինչև համապատասխան թարգմանիչ ունենալը:

2.2 Ազատագրկման վայրերի մոնիտորինգի և հարցազրույցների վարման ներքին ուղեցույցներ

Հետևողականության և որակի ապահովման համար մոնիտորինգ իրականացնող կազմակերպությունները պարտավոր են մշակել հստակ ներքին ուղեցույցներ: Վերջինս պետք է տրամադրել նաև թարգմանիչներին: Ուղեցույցների հիմնախնդիրներն են՝

- Թարգմանիչներին անհրաժեշտ լիազորությունների և մուտքի իրավունքի հիմնախնդիրները
- Անվտանգության և արդյունավետության նկատառումներից ելնելով՝ երբ օգտվել տղամարդ և երբ կին թարգմանիչների ծառայություններից:
- Երբ, որտեղ և ինչ պայմաններում անցկացնել հարցազրույցը
- Ով իրավունք ունի ներկա գտնվելու
- Որոնք են գործող անձանց գործողությունների շրջանակներն ու սահմանները
- Ինչպիսին պետք է լինի հարցազրույցի ընթացքը
- Շփման հիմնախնդիրները
- Հարցազրույցներ խոցելի խմբերից անձանց հետ
- Թարգմանչի այլ առաջադրանքները

2.3 Տեղեկատվություն, վերապատրաստում, ինչպես նաև էթիկայի և վարվեցողության կանոնները

Պատահական թարգմանիչների դեպքում դիտորդները նախօրոք պետք է նրանց հետ համաձայնեցնեն կազմակերպության կողմից նախապես մշակված ցուցումները: Վերջինս կօգնի նրանց հասկանալ իրենց դերը, իսկ դիտորդներին վերահսկել գործընթացը:

Հիմնական թարգմանիչներին, ովքեր աշխատում են մոնիտորինգն իրականացնող կազմակերպության հետ՝ անկախ նրանց պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ լինելուց պետք է ուսումնասիրության և ստորագրման համար

տրամադրել հարցազրույցի վարման կարգը, որը սահմանում է նաև էթիկայի այն նորմերը, որոնց անհրաժեշտ է հետևել²: Նրանց պետք է տրամադրել նաև մոնիտորինգի և հարցազրույցի անցկացման համար անհրաժեշտ վերոնշյալ ուղեցույցը:

Սույն փաստերը և մյուս համապատասխան հիմնախնդիրները պետք է քննարկվեն և համաձայնեցվեն և դիտորդների, և թարգմանիչների համար կազմակերպված հատուկ և պարբերական դասընթացների ժամանակ: Նախընտրելի է, որպեսզի նրանց մասնակցեն փորձառու թարգմանիչներ և ազատագրված վայրերի դիտորդներ: Սույն գործընթացի կետրոնական մասը պետք է կազմի իրավիճակի ուսումնասիրությունը և դերակատարումը: Դասընթացները պետք է թարգմանիչներին հնարավորություն տրամադրեն դիտորդների հետ հարաբերություններ կառուցելու և մեթոդաբանությունը հասկանալու: Նոր թարգմանիչները պետք է ծանոթ լինեն նաև կազմակերպությանը՝ իրենց աշխատանքի ծավալն ավելի լավ պատկերացնելու համար:

2.4 Աջակցություն թարգմանիչներին

Թարգմանիչները ազատագրված անձանց հետ աշխատանքից հետո, որպես արդյունք, կարող են կրել բացասական սոցիալ հոգեբանական հետևանքներ: Այդպիսիք են գայրույթը, լարվածությունը, ընկճվածությունը, գերհոգնածությունը կամ այլ տրավմաները: Նրանք կարող են իրենց աշխատանքային հարաբերություններում դժվարություններ ունենալ դիտորդ կոլեգաների հետ կամ ստիպված լինել լուծել որոշ խնդիրներ կապված իրենց աշխատանքի հետ: Մոնիտորինգն իրականացնող կազմակերպությունները պարտավոր են ստեղծել պայմաններ, որպեսզի թարգմանիչները կարողանան հաղթահարել տվյալ մարտահրավերները: Այդ պայմաններից են՝

- Տրամադրել թարգմանիչներին “շփման կետ” մոնիտորինգ իրականացնող կազմակերպությունում, ով կարող է աջակցել, տալ խորհուրդներ, բայց միևնույն ժամանակ չի հաղիսանում նրա դիտորդը:
- Տրամադրել տեղեկություն թարգմանչի վրա մոնիտորինգի աշխատանքի հետևանքով հնարավոր սոցիալ-հոգեբանական ազդեցությունների և նրանց հաղթահարման վերաբերյալ³:
- Ներքին ուղեցույցում անդրադառնալ սննդի, ընդմիջումների, աշխատանքային ժամերի և այլ կարիքների և թարգմանիչների հետ աշխատող դիտորդների վերապատրաստման խնդիրներին:
- Հստակ ներկայացնել թարգմանիչներից ակնկալվող լրացուցիչ առաջադրանքները:
- Համոզվել, որ դիտորդները մոնիտորինգային այցերից կամ հարցազրույցներից հետո և առաջ պատշաճ տեղեկություն են ստանում թարգմանիչներից:

² Օրինակ, տես՝ Բժշկական հիմնադրամ խոշտանգումների գոհերի խնամքի համար “Թարգմանիչների և փորձագետների համատեղ աշխատանքի համար աշխատանքի և էթիկայի կանոնագիրք”, 2005; UNHCR-ի “Թարգմանիչները փախստականների համատեքստում. Ինքնուսույց, մոդուլ 3, Հավելված I, 2009

³ Տես՝ UNHCR-ի “Թարգմանություն փախստականների համատեքստում”, 2009

- Թարգմանիչների զարգացմանը նպաստելու համար աշխատանքների պարբերական գնահատում ըստ թափանցիկ չափանիշների⁴:

2.5 Անվտանգություն և ճնշամիջոցներ

Ազատագրկման վայրերի մոնիտորինգում աշխատող թարգմանիչները կարող են դառնալ բռնությունների և այլ անցանկալի գործողությունների զոհ: Ի հավելումն, թարգմանիչների գործողությունները կարող են ռիսկի ենթարկել մոնիտորինգում ընդգրկված այլ անձանց: Մոնիտորինգն իրականացնող կազմակերպությունները պարտավոր են կանխարգելել և նման հավանականությունները, և նաև պատրաստ լինել պատահելու դեպքում արձագանքել նրանց: Թե ինչ գործողություններ ձեռնարկել, կախված է առկա իրավիճակից, սակայն հիմնականում թարգմանիչները և նրանց ընտանիքները կամ ընկերները պետք է շուրջօրյա շփման հնարավորություն ունենան մոնիտորինգն իրականացնող կազմակերպության հետ: Պետք է խիստ արգելել տեղական իշխանությունների, ինչպիսիք են օրինակ ոստիկանություն և թարգմանիչ փոխադարձ կապերը: Եթե թարգմանիչը մոնիտորինգին առաջարկվել է իշխանությունների կողմից, ապա նրանք պետք է դիմեն մոնիտորինգ իրականացնող կազմակերպությանը ուղղակիորեն: Իշխանությունների կողմից մոտեցումները ցանկացած դեպքում պետք զեկուցվեն թարգմանիչների՝ կազմակերպությունում “շփման կետին”: Թարգմանիչները երբևիցե չպետք է մուտք ունենան անձնական քարտարաններին և գաղտնի ինֆորմացիա պարունակող տվյալների բազային:

3. Հայեցակարգային և այլ մարտահրավերներ

3.1 Ազատագրկման վայրերի մոնիտորինգի և թարգմանիչների էթիկական նկատառումները

Դիտորդների էթիկական սկզբունքները դիտարկված են ԽԿԱ-ի “Ազատագրկման վայրերի մոնիտորինգ: Գործնական ուղեցույց” ձեռնարկում: Դրանք կարևոր են ոչ միայն հարցազրույցին կայունություն և պրոֆեսիոնալիզմ հաղորդելու, այլ նաև այն առավել կանխատեսելի, այսինքն վերահսկելի դարձնելու հարցվողների համար:

Թարգմանիչները պետք է նաև հետևեն համապատասխան էթիկական չափորոշիչներին: Ինչպես արդեն վերը նշվեց թարգմանիչների և դիտորդների համար նախատեսված էթիկայի գրված կանոնների և աշխատանքային մեթոդների ուղեցույցը չափազանց կարևոր է: Այն կօգնի խուսափել ընդհարումներից, շփոթություններից և սխալներից:

Կարևոր է սկզբում ձեռք բերել թարգմանիչների արձագանքը, թե որքանով իրենք թարգմանիչները կարող են հետևել էթիկական և մյուս սպասելիքներին, քանի որ այն, ինչը իմաստ ունի մի համատեքստում կարող է խիստ տարբերվել մեկ

⁴ Այն ուղեցույցների գնահատման համար, որոնք կարող են ընդունվել դիտորդական համատեքստում տես՝ Թարգմանչության միջազգային ասոցիացիայի “Բժշկական թարգմանական աշխատանքի չափորոշիչները”, 2007 և Առողջապահությանը վերաբերող թարգմանությունների Ազգային խորհրդի “Առողջապահության ոլորտի թարգմանիչների աշխատանքի ազգային չափորոշիչները”, 2005

այլում: Բաց քննարկումը կարող է օգնել բարեփոխել կանոններն ու ուղեցույցերը և խուսափել գործնական դժվարություններից: Թարգմանիչների համար նախատեսված էթիկայի նորմերը պետք է ընդգրկեն հետևյալ առանցքային սկզբունքները՝

- Չվնասել
- Գաղտնիություն
- Անաչառություն
- Ճշգրտություն
- Հարգանք
- Չզայունակություն
- Խտրականության բացառում
- Մասնագիտական տարածություն

Թարգմանիչները պետք է իրավունք ունենան հրաժարվելու այն պարտականություններից, որոնք նրանք կարծում են չեն կարող մասնագիտորեն կատարել: Վերջինս կարող է արդյունք լինել անձնական արժեքների, շահերի բախման կամ այնպիսի իրավիճակներում թարգմանելու, որտեղ նրանք իրենց անպատրաստ կամ չորակավորված զգում են:

3.2 Դիտորդի դերը

Պրոֆեսիոնալիզմի սահմանների հարցը կարող է առաջանալ ազատագրկման վայրերում մոնիտորինգային հարցազրույցների ընթացքում թարգմանիչների ծառայություններից օգտվելու ժամանակ: Բխող խնդիրները պետք է բաց քննարկվեն միասին, մինչև մոնիտորինգ՝ գործնականում դժվարություններից խուսափելու համար:

Նույնիսկ եթե դիտորդներն աշխատում են թարգմանիչների հետ, ապա միևնույն է նրանք են պատասխանատու հարցազրույցի ընթացքում էթիկական, պրոֆեսիոնալ և հայեցակարգային նորմերի պահպանման համար: Դիտորդները, և ոչ թարգմանիչներն են պատասխանատու հարցազրույցի ընթացքի կառավարման համար: Այնուամենայնիվ դիտորդները պետք է կարողանան և սովորեն ճիշտ օգտագործել թարգմանիչների գիտելիքներն ու հմտությունները:

Դիտորդներին և թարգմանիչներին խորհուրդ է տրվում մի փոքր ժամանակ վերցնել աշխատանքից առաջ՝ համոզվելու, որ երկու կողմերն էլ ունեն միևնույն ընկալումն ու ակնկալիքները: Վերջինս կարող է օգնել պատրաստվելու սպասելի մարտահրավերներին: Երբեմն դիտորդ-թարգմանիչ թիմը մշակում է նշաններ մոնիտորինգային այցերի և հարցազրույցների ժամանակ կիրառելու համար: Դրանք կարող են լինել վերբալ կամ ֆիզիկական և վերաբերեն խնդիրներին, ինչպիսիք են օրինակ հարցազրույցի հետաձգումը, ուղղվածությունը փոխելը, երբ առկա որևէ խնդիր կա, երբ նրանք ցանկանում են միասին ինչ-որ բան քննարկել, ավելի դանդաղ կամ արագ խոսել և այլն:

3.3 Թարգմանչի դերը

Պրոֆեսիոնալ թարգմանիչները գիտակցում են ենթադրյալ հասարակ առաջադրանքի ողջ հիմնական բարդությունները: Թարգմանչի հիմնական դերը

Թարգմանության ընթացքում՝ լինել նվազագույնը ներխուժող՝ արդյունավետ շփումն ապահովելու համար: Ի հավելումն, նա պետք է աշխատի այնպես, որ դիտորդ-հարցվող հարաբերությունները չճնշվեն դիտորդ-թարգմանիչ կամ թարգմանիչ-հարցվող հարաբերություններով:

Հարցազրույցի ժամանակ թարգմանչի հիմնական դերերը հետևյալն են՝

- Միացնող
- Մշակութային միջերես
- Հստակեցնող
- Պաշտպան

Միացնող

Հանդիսանում է թարգմանչի հիմնական դերը, որին պետք է հասկացվի ժամանակի մեծ մասը: Այն ներառում է իմաստի թարգմանությունը և ասվածի գրանցումն առանց լրացումների, բացթողումների և փոփոխությունների: Թարգմանվող հաղորդագրությունը պետք է լինի առաջին դեմքով: Միացնող դերը պետք է իրականացվի թարգմանչի կողմից այնքան ժամանակ, մինչև թարգմանիչը կնկատի հարցվողի կամ դիտորդի կողմից սխալ հասկացվելու վտանգ: Թարգմանիչը պետք է ղեկավարի շփման խոսքը թարգմանության ճշգրտությունն ապահովելու համար:

Մշակութային միջերես

Լեզուն արմատավորված է մշակութային հավատալիքների, ընկալման, արժեքների վրա, որոնք համակարգում են սուբյեկտիվ իրականությունը: Մշակութային միջերեսի դերում թարգմանիչը ապահովում է ցանկացած ուղղությամբ թարգմանելու ժամանակ հաղորդագրության ընկալման համար անհրաժեշտ հենքը: Թարգմանիչները կարող են ստանձնել այս դերը, երբ մշակութային կամ այլ տարբերությունները թարգմանելիս կարող են սխալ կամ անհամապատասխան հասկացվեն դիտորդի կամ հարցվողի կողմից: Սակայն և դիտորդները, և թարգմանիչները պետք է տեղյակ լինեն թարգմանչի սեփական սուբյեկտիվ մշակութային մեկնաբանման սահմաններին: Կարևոր չէ, թե որքան փաստացի տեղեկություն ունի նա հավատալիքների, նորմերի և ավանդույթների վերաբերյալ, մշակութային առանձնահատկություններին հետևելը կարող է հանգեցնել ոչ լիարժեք հասկացվածության և կարող է տարբերվել ենթախմբից ենթախումբ, անհատից անհատ: Մշակութային միջերեսի դերն ավելի ներխուժողական է, քան միացնողինը:

Հստակեցնող

Այս դերում թարգմանիչը կարգաբերում է գրանցումները և պարզաբանում այն բարդ հասկացությունները, տերմինները, որոնք չունեն լեզվական հստակ համարժեքներ կամ որոնց լեզվական համարժեքները կարող են չհասկացվել : Կալանավայրերի մոնիտորինգի համատեքստում վերջիս բեկումնային դեր է, որն ունի թարգմանիչը դիտորդի հանդեպ: Մինչդեռ դիտորդը պատասխանատու է թարգմանչի միջոցով պարզաբանելու, երբ է հարցվողը դժվարանում հասկանալ:

Միայն, երբ վերջինս տեղի չի ունենում թարգմանիչն անձամբ պետք է ստանձնի հարցվողին պարզաբանելու դերը, և միայն դիտորդի համաձայնությամբ:

Պաշտպան

Թարգմանիչը պետք է ստանձնի պաշտպանի դերը միայն ծայրահեղ դեպքում՝ դիտորդի հետ փորձելով շփման բոլոր մնացած տարբերակները, և որպես կատարյալ վերջին տարբերակ: Այս դեպքում թարգմանիչն ինքն է ստանձնում վերահսկողությունը և ավարտին հասցնում հարցազրույցը: Վերջինս կարող է տեղի ունենալ, երբ դիտորդը կորցնում է վերահսկողությունը կամ գործում է այնպես, որ կարող է սպառնալ հարցվողի մարդու իրավունքներին և առողջությանը: Սույն սցենարի տեղի ունենալու դեպքում մոնիտորինգն իրականացնող կազմակերպությունը պետք է conduct a review of conduct թարգմանիչի և դիտորդի կողմից չկրկնվելու համար:

3.4 Թարգմանիչների համար նախատեսված այլ ընդհանուր առաջադրանքներ

Նշումներ կատարող

Ապացուցված է, որ լավագույն փորձերից մեկը, երբ կալանավայրերի դիտորդները ազատագրված անձանց հետ հարցազրույցը վարում են երկուսով. մեկը վարում է քննարկումը, իսկ մյուսը՝ նշումներ կատարում: Թարգմանիչների օգնությամբ հարցազրույցի անցկացման դեպքում, վերջինս ավելի է բարդանում: Երկու դիտորդների և թարգմանիչի առկայությունը կարող է հավանական հարցվողի համար անցանկալի, վախեցնող և ոչ պրակտիկ լինել: Միայն մեկ դիտորդի և թարգմանիչի առկայության դեպքում դիտորդը ինքը կարող է գրառումներ կատարել, ինչպես նաև վարել զրույցը, որը սակայն կխոչընդոտի հարցվողի հետ շփմանը: Իսկ թարգմանիչը կարող է գրառումներ կատարել: Սակայն սա նույնպես հավասարապես կարող է խանգարել նրա հիմնական աշխատանքին: Այդ իսկ պատճառով, որպես վերջին տարբերակ թարգմանիչը պետք է արձանագրի առանցքային տվյալները ինչպիսիք են ամսաթիվը, ժամը և անունները, որոնք հետագայում կարող են օգնել դիտորդներին:

Արձագանքների/գաղափարների աղբյուր

Մոնիտորինգում փորձ ունեցող թարգմանիչը կարող է օգնել դիտորդին հարցազրույցը ճիշտ ընկալել: Սակայն որքան շատ են դիտորդները ներգրավում թարգմանիչներին իրենց վերլուծական դերակատարման մեջ, այնքան շատ է նրանց միջև կոնֆլիկտների և մրցակցության հավանականությունը:

Լոգիստիկա և թարգմանություն

Հատկապես միջազգային մոնիտորինգ իրականացնող մարմինների դեպքում թարգմանիչները հաճախ կատարում են նաև լոգիստիկ դերը: Նրանց կարող են դիմել փոխադրումներ, հեռախոսազանգեր կատարելու, ռեստորաններում տեղեր ամրագրելու և պայմավորվածություններ կատարելու համար:

Հաճախ նման փաստաթղթերը դիտորդները ստանում են տեղի լեզվով, այդ ժամանակ թարգմանիչները կրկին պետք է ապահովեն թարգմանությունները: Դիտորդները սակայն պետք է աշխատեն չչարաշահել թարգմանչին տրվող լրացուցիչ գործառույթները:

3.5 Դիտորդների և թարգմանիչների այլ խնդիրները

Կան շատ այլ խոչընդոտներ դիտորդների և թարգմանիչների համար, որոնք, եթե հնարավոր է, անհրաժեշտ է նախապես քննարկել:

Դրանք են՝

Դժվար հարցվողներ

Շատ հարցվողներ դժվարանում են կենտրոնացած, համակարգված, ժամանակագրորեն ճիշտ, նյութի հետ առնչվող և հստակ տեղեկություններ տալ, ինչպիսին կնախընտրեին դիտորդները: Որոշները կարող են խոսել առանց ընդմիջման երկար ժամանակ: Դիտորդը պետք է փորձի բացատրել հարցվողին նյութը ներկայացնել քայլ առ քայլ՝ հաշվետվությունը հասկանալու համար: Եթե վերջինս չի հաջողվում դիտորդը/թարգմանիչը կարող են պարբերաբար ընդհատել, ինչը սակայն կխանգարի հարցվողի մտքի ընթացքին: Արդյունքում թարգմանիչը ստիպված է ամփոփելու հարցազրույցը վարողին ներկայացվող զեկույցը: Վերջինս, իհարկե, ցանկալի չէ, և դիտորդը փոխարենը ստիպված է պարբերաբար կամ հիմնական հաշվետվության ավարտից հետո լրացուցիչ հարցեր տալ՝ հստակեցնելու արդյոք ճիշտ է հասկացել:

Շուկով կամ հաջորդական թարգմանություն

Որոշ դիտորդներ նախընտրում են, երբ թարգմանիչը շուկով է վարում թարգմանությունը՝ չընդհատելով հարցվողի խոսքը: Մյուսները նախընտրում են հաջորդական թարգմանություն, որտեղ դիտորդը/հարցվողը դադար են տալիս, որպեսզի թարգմանիչը թարգմանի: Կան նաև որոշները, ովքեր ընդունում են երկու մոտեցումներն էլ՝ կախված հարցվողի շփման ոճից:

Հարցազրույցի ընթացքում դիտորդի և թարգմանչի միջև ծագած անհամաձայնությունների հաղթահարումը:

Երբեմն դիտորդի և թարգմանչի հարաբերությունները կարող են խաթարվել հարցազրույցի ընթացքում: Անկախ պատճառից դիտորդը պատասխանատու է տվյալ իրավիճակի հարթման համար: Նա պետք է կարողանա վերահսկել իր դեմքի արտահայտությունը և շարժումներն այնպես, որ ներկա գտնվողների համար խնդրի առկայությունը ակնհայտ չդառնա: Մյուսից, նա հանգիստ կարող է հայտնել հարցվողին, որ ցանկանում է թարգմանչի հետ ճշտել արդյոք ճիշտ է հասկացել: Ապա անվրդով հիշեցնի թարգմանչին իր պարտավորությունների մասին և անհրաժեշտության դեպքում անդրադառնա կազմակերպության ուղեցույցին: Խնդրի արագ լուծում չստանալու դեպքում, հարցազրույցը պետք է ընդհատվի այնպես, որ ներկաների համար պատճառը բացահայտ չլինի, հակառակ դեպքում հարցվողը կարող է շփոթվել և անհարմար դրության մեջ հայտնվել: Ապա դիտորդը և թարգմանիչը կարող են խնդիրը քննարկել դրսում և

Եթե անհրաժեշտ է վերադառնալ կամ գտնել այլ լուծում, եթե տվյալ պահին տարաձայնություններն անլուծելի են թվում:

3.6 Անհայտ գործոններ: Հարցվողի դիրքն ու հեռանկարները

Դիտորդները սակավադեպ կարող են նախօրոք տեղյակ լինել յուրաքանչյուր հարցվողի պատմությանը, փորձին, սոցիալ-հոգեբանական վիճակին, համատեքստին կալանավայրում, դրդապատճառներին և տեսակետներին: Միաժամանակ դժվար է կանխատեսել հարցվողի՝ դիտորդների և թարգմանիչների հանդեպ վերաբերմունքը: Ոմանք կարող են կասկածանքով վերաբերվել թարգմանչին, ով իրենց ավելի մոտ է և լավ վերաբերվել օտարերկրյա անձանց: Մյուսները կարող են ավելի վստահ զգալ “ծանոթի” կողքին և չվստահել օտարերկրացիներին՝ համարելով շատ տարբեր: Ոմանք կարող են նախընտրել քննարկել որոշակի խնդիրներ ուրիշ ազգության և սեռի մարդկանց հետ: Տարբերակները բազմաթիվ են: Բոլոր այս գործոնները իրենց ազդեցությունը կունենան հարցվողի՝ դիտորդի և թարգմանչի հետ շփման մոտեցումների վրա: Նրանք պետք է բավականին ճկուն լինեն՝ հասկանալու նման խնդիրները և արագ արձագանքելու նրանց:

4. Ուղեցույց

Դիտորդ և թարգմանիչ հարաբերությունները հարմար է դիտարկել երեք փուլերում՝ հարցազրույցից առաջ, ընթացքում և հետո: Ահա դիտորդներին և թարգմանիչներին անհրաժեշտ յուրաքանչյուր փուլի ուղեցույցը:

Դիտորդներ

Ուղեցույց թարգմանիչների հետ աշխատելու համար

«»ն չ

«»ն չ

ՕՇԿԻ

- Ստեղծագործություններում ընդգծվում է ինքնուրույն աշխատանքի կատարմանը և ինքնուրույն կրթությանը:
- Երկրորդական կրթության ծանոթացնել Ձեզ մշակութային և այլ առանձնահատկությունների հետ:
- Համոզվել, որ Ձեր և թարգմանիչի միջև առկա ներաձևական խնդիրները մի կողմ են դրված հարցազրույցից առաջ:
- Տրամադրել թարգմանիչներին հարցվողներին նախապես տրվող գրավոր նյութերի պատճենները:
- Տեղեկացնել, թե քանի մասնակից է լինելու հարցազրույցի ժամանակ՝ հարցվողին չվախեցնելու համար:

- Սկսել հարցազրույցն առանց նախապես Ձեզ և թարգմանիչն ներկայացնելու:

ԱՅԻՆՈՒՄ

- Ներկայանալ: Եթե Դուք գիտեք մի քանի բառ կալանավորի լեզվով, մինչև խոսքը թարգմանիչին փոխանցելը ինքներդ ներկայացրեք Ձեզ:
- Ծանոթացնել թարգմանիչին և բացատրել նրա դերը:
- Ճշտել հարցվողից արդյոք նա կնախընտրի չօգտվել թարգմանիչի ծառայություններից:
- Ուշադրություն դարձնել ոչ վերբալ նշաններին, որոնք կարող են ցույց տալ, թե ինչպես է հարցվողն իրեն զգում թարգմանիչի ներկայությամբ, կամ այլ գործոններին:
- Տեղյակ լինել թարգմանիչից հարցվողին տրվող թելադրանքներին և այլ գործոններին:
- Նստել հարցվողի և մյուս կողմից թարգմանիչի դիմաց՝ երկուսին տեսանելի լինելու համար: Այլապես, ավելի շատ լինելու դեպքում, նստել հավասարակողմ եռանկյունով կամ շրջանով:
- Նայել հարցվողին նրա հետ զրուցելիս կամ թարգմանությունն ունկնդրելիս:
- Օգտագործել տեսողական կոնտակտը և կառավել Ձեր շարժումները:
- Խոսել ավելի դանդաղ և հստակ՝ թարգմանիչին աջակցելու և հարցվողին հորդորելու համար:
- Խոսել պարզ լեզվով և հստակ ու ճշգրիտ տեղեկություն տալ: Հակիրճ հարցեր

- Անտեղի բարձր խոսել:
- Տալ բազմաբանակ հարցեր: (Օրինակ՝ Ինչ պատահեց, երբ Դուք ժամանեցիք, արդյոք նրանք գրանցեցին Ձեր անունը, կամ փնտրեցին Ձեզ, իսկ ինչ ասացին:):
- Փորձել ժամանակ խնայել՝ խնդրելով թարգմանիչին ամփոփել, եթե ծայրահեղ անհրաժեշտություն չկա:
- Հարցազրույցի վերահսկողությունը զիջել թարգմանիչին:
- Թույլ տալ թարգմանիչին ղեկավարել հարցազրույցը:

	<p>տալ՝ նախապես դրանք մտքում ձևակերպելով:</p> <ul style="list-style-type: none"> • Դադար տալ յուրաքանչյուր երկու-երեք նախադասությունից հետո՝ թույլ տալով թարգմանչին փոխանցել Ձեր հաղորդագրությունը: • Տալ ուղիղ հարցեր և ձևակերպումներ, <i>օր.</i>՝ ‘Դուք հիշում եք պատերի գույնը:’ և ոչ ‘Հարցրեք նրան, արդյոք հիշում է պատերի գույնը:’ • Պարաստ լինել վերաձևակերպելու Ձեր հարցը: • Լինել համբերատար: Թարգմանվող հարցազրույցները ավելի ժամանակատար են, քան ուղղակի հարցազրույցները: • Մինչև պատասխանելը սպասել թարգմանության ավարտին, եթե նույնիսկ Դուք կարծում եք, որ հասկացել եք հարցվողի հարցը: • Պարբերաբար ամփոփել ներքաշված բարդ խնդիրները, կամ երբ հարցվողը դժվարանում է համակարգված կերպով կապակցել: • Միտումնավոր սխալ հարցեր տալ՝ ստուգելու Ձեր հասկացածը: • Մինչև հարցազրույցն ավարտելը, դիմել թարգմանչին բոլոր այն դիտարկումների վերաբերյալ, որոնք անդրադառնալու կարիք ունեն: • Թարգմանչի հետ առանձին լինել հնարավորինս կարճ ժամանակով և տալ հարցվողին բացատրություններ, եթե այն մի քանի վայրկյանից երկար ձգվի: • Կատակելիս ուշադիր լինել: Հումորը կարող է ճիշտ չթարգմանվել: 	
<p>Ծ»իá</p>	<ul style="list-style-type: none"> • Ինֆորմացիայի, հստակեցման, ինչպես նաև կողմնակի կարծիքի անհարժեշտության դեպքում թարգմանչի հետ քննարկել հարցազրույցի բովանդակությունը: • Թարգմանչի հետ կառուցողականորեն քննարկել համատեղ աշխատանքի մեթոդները՝ ապագայում այն բարելավելու համար: • Հարգել թարգմանչին և նրա աշխատանքը: 	
<p>Թարգմանիչներ</p>		
<p>Ուղեցույց ազատագրկման վայրերի դիտորդների հետ աշխատելու համար</p>		
<p>Պետք է</p>		<p>Չպետք է</p>
<p>Մինչև</p>	<ul style="list-style-type: none"> • Ունենալ նոութբուք և գրիչ(ներ): • Ցանկացած ընթացակարգային, լեզվական կամ այլ կասկածներ ունենալու 	

	<p>դեպքում դիմել դիտորդին:</p> <ul style="list-style-type: none"> • Դիտորդին ծանոթացնել համապատասխան կարևոր մշակութային առանձնահատկությունների՝ այդ թվում հագուստի, բարևելու կարգի, ստորակարգի, հասցեների գրանցումների, գենդերային հիմնախնդիրների և այլնի հետ: • Բացահայտել բոլոր այն պատճառները, որոնց հետևանքով կարծում եք չեք կարող մասնակցել հարցազրույցին: 	
<p>Ընթացքում</p>	<ul style="list-style-type: none"> • Նստել այնպես, որ պեստի հարմար լինի տեսնել և լսել և դիտորդին, և հարցվողին: • Հետագայում դիտորդին օգնելու համար գրառել մանրամասները, ինչպիսիք են ամսաթիվը, թվերը և անունները: • Գաղտնի տեղեկությունները կողավորել նոութբուքում: • Նշել այն հարցերը, որոնք հետագայում անհրաժեշտ է քննարկել կամ անդրադառնալ դիտորդի հետ միասին: • Կիրառել ուղիղ թարգմանություն և ոչ անուղղակի խոսք: • Կառավարել Ձեր շարժումները և դեմքի արտահայտությունը: • Դիտորդի հետ ճշտել այն հարցերը, որոնք Դուք չեք հասկացել, և երբեք չտալ դիտորդի այն հարցերը, որոնք կարող են լուրջ վիրավորել կամ վնասել հարցվողին: • Խուսափել չափազանց երկար նախադասություններից: • Ընդհատել հարցվողին, եթե նա չափազանց երկար կամ արագ է խոսում: Վերջինս պետք է անել նրբանկատորեն և համապատասխան ժամանակ: Իշխանությունների հետ պետք է ավելի ուշադիր լինել: • Օգնել դիտորդին ղեկավարել հարցազրույցը: 	<ul style="list-style-type: none"> • Փորձել կատարել դիտորդի աշխատանքը: • Թույլ տալ Ձեր անձնական արժեքները և համոզմունքները ազդեն թարգմանության վրա: • Փոխել, լրացնել կամ ավելացնել թարգմանվող հարցերը կամ պատասխանները: • Պատասխանել հարցվողի հարցերին կամ հակառակը, եթե նույնիսկ Դուք գիտեք պատասխանը: • Մոռանալ նութբուքը: • Դիտորդից առաջ անցնել՝ անկախ նրանից քանի անգամ եք նախկինում մասնակցել նույն ընթացակարգին:
<p>Հետո</p>	<ul style="list-style-type: none"> • Հարգել մոնիտորինգի գործընթացի գաղտնիությունը: • Արձագանքներում դիտորդին տեղեկացնել բոլոր դժվարությունների մասին: 	

5. Եզրակացություն

Դժվարությունները, որոնք ծագում են թարգմանչի հետ հարցազրույցի ժամանակ, պետք է հաղթահարել կազմակերպության կողմից հստակ մշակած քաղաքականության, կարգի, լավագույն փորձի միջոցով, ինչպես նաև դիտորդի և թարգմանչի նախաձեռնությամբ:

Կարևոր է հիշել, որ ազատագրված վայրերի դիտորդների գլխավոր մտահոգությունը պետք է լինի ազատագրված հարցվողի բարեկեցությունը, հանգիստը և հետաքրքրությունները: Դիտորդը պատասխանատու է հարցազրույցի ընթացքի, այդ թվում նաև թարգմանչի աշխատանքի պարզեցման համար: Մյուս կողմից թարգմանչի դժվար և ամենակարևոր դերը՝ նվազագույն միջամտությամբ լեզվական և մշակութային կապ ապահովելն է՝ ինֆորմացիայի ամբողջականությունը փոխանցելու համար: Մակայն կարևոր են նաև նրա մյուս դերերը, մասնավորապես, երբ միջազգային դիտորդներն աշխատում են անձանթ տեքստի հետ:

Անհրաժեշտ է իրատես լինել: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նույնիսկ պրոֆեսիոնալ թարգմանիչները՝ աշխատելով իդեալական պայմաններում, կարող են թարգմանել սավաճի միայն 70-80%-ը: Եվ դիտորդին, և թարգմանչին ազատագրված վայրերում հարցազրույցների ժամանակ անհրաժեշտ է լինել համբերատար՝ հարցազրույցը հնարավորինս արդյունավետ դարձնելու, ազատագրված անձանց մարդու իրավունքները պաշտպանելու համար:



Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիա - ԽԿԱ
 Route de Ferney 10 Փոստարկղ - 137
 CH - 1211 Ժնև 19
 Հեռ. (+41 22) 919 2170 Fax: (+41 22) 919 2180
 Էլ. փոստ: apt@apt.ch Համացանց: www.apt.ch

Ծանոթագրություն: Սույն ամփոփագիրը հղում է կատարում ԽԿԱ անձնակազմի և նրա գործընկերների լավագույն փորձին: Օգտագործված են նաև նյութեր UN DPKO-ի “Կալանավայրերի աջակցության ուղեցույցի ձեռնարկ, հավելված 4, թարգմանիչների հետ աշխատանքի ուղեցույց”-ից, 2006; Մասաչուսեթսի հանրային առողջության բաժանմունքի “Հիվանդանոցներում իրականացվող թարգմանական ծառայությունների աշխատանքների առաջարկներ”-ից, անհայտ տարեթիվ; Խոշտանգումների զոհերի կենտրոնի “Վերացնել անդունդը. կիրառել վերապատրաստված թարգմանիչների ծառայություններ”-ից, փետրվար-մարտ 2001; Խոշտանգումների կանխարգելման եվրոպական հանձնաժողովի “CPT այցերի ընթացքում թարգմանիչների արդյունավետ օգտագործման վերապատրաստման դասընթացների շրջանակներ”-ից, 2001; Առողջապահության վերաբերյալ թարգմանությունների ազգային խորհրդի “Առողջապահության ոլորտի թարգմանիչների աշխատանքի ազգային չափորոշիչները”-ից, 2005; Բժշկական թարգմանիչների միջազգային ասոցիացիայի “Բժշկական թարգմանական աշխատանքների չափորոշիչներ”-ից, 2007; Ավստրալիայի առողջապահության նախարարության “Առողջապահական ոլորտում թարգմանիչների հետ աշխատանքի ուղեցույց”-ից, անհայտ տարեթիվ; Բժշկական հիմնադրամ խոշտանգումների զոհերի խնամքի համար “Թարգմանիչների և փորձագետների համատեղ աշխատանքի համար աշխատանքի և էթիկայի կանոնագիրք”-ից, 2005; UNHCR-ի “Թարգմանիչները փախստականների համատեքստում. Ինքնուսույց, մոդուլ 3, Հավելված I”-ից, 2009; OSCE-ի “Աշխատել որպես թարգմանիչ կամ թարգմանչի հետ”-ից, անհայտ տարեթիվ; և www.diversityrx.org-ից: